ԹԵՄԱ 2 ԱՍԻԱ

ԴԱՍ 2.4. Վրաստանի Հանրապետություն (Վրաստան): Աշխարհագրական դիրքը: Բնական պայմանները և ռեսուրսները:

• • •

Կոլխիդայի դաշտավայրում տարածված են կարմրահողերը,դեղնահողերը, ինչպես նաև ճահճային ու ալյուվիալ գետաբերուկային հողերը, որոնք խոնավ մերձարևադարձային կլիմայի շնորհիվ նպաստավոր են թեյի և ցիտրուսների մշակության համար:

• • •

Անտառները հիմնականում տարածված են երկրի արևմտյան խոնավ մասում, Մեծ և Փոքր Կովկասի լանջերին: Երկրի արևելյան չորային շրջաններում տիրապետում են չոր տափաստանները:

• • •

ԽՍՀՄ փլուզումից հետո (1991 թ.)Վրաստանը քաղաքական անկախություն ստացավ և դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ (1992 թ.):

• • •

Բնական պայմանները և ռեսուրսները. Չնայած ոչ մեծ տարածքին, երկրի բնական պայմանները բազմազան են: Տարածքի կեսից ավելին զբաղեցնում են Մեծ ու Փոքր Կովկասի լեռները: Երկրի հարավ-արևելքում ընդարձակ տարածք է զբաղեցնում Ալազանի միջլեռնային գոգավորությունը, իսկ արևմուտքում՝ Կոլխիդայի ճահճապատ դաշտավայրը: Մեծ Կովկաս լեռնաշղթայի վրա էլ գտնվում է ամենաբարձր լեռնագագաթը՝ Էլբրուսը (5642 մ):